զրքերի թիւը 131,000-ի կը հասնէր։ Մինչդեռ այդ թուի երրորդականը հազիւ է հաւաքված։ Մինչև այժմ ընակիչներից 20000 խնդիրքներ են ներկայացրած, որոնք մասամբ բողոքում են անկանոն կորզագրութեան դէմ և մասամբ խնդրում են կառավարութենից արձակել իրանց գինուորական ծառայութենից։ Այնուամենայնիւ կառավարութիւնը յոյս ունի, որ յունական պատրաստի զօրքերի թիւը մինչև հոկտեմբերի 21-ը կը հասնի գոնեա 40,000-ի։ Զինուորական վարժութիւնները կը կատարվին զանազան բանակների մէջ։ Զօրքերից ամենից լաւ կազմակերպված են թնդանօթաձիգները, այդ պատճառով նրանք արդէն սկսեցին ուղևորվել դէպի յունական սահմանները։ Նորերումս հնձելոցքի համար բերին 280 ունդարական ձիաներ և գարձեալ սպասում են 600-ի չը նայելով, որ շատ դժուար է թուով մեծ զօրաժողովները բնակեցնել զանազան նահանգների մէջ, այնուամենայնիւ նրանց բնակարանները լաւ են և զօրքերը թէ զէնքի և թէ առողջապահութեան կողմից ամենալաւ դրութեան մէջ են։ Այդ է պատճառը, որ օրեցօր աւելանում են Թիւրք փախստական գինուորների թիւը, որոնք պատառոտած շղթրով գալիս են Յունաստան և աղաչում են կառավարութենից, որ իրանց ընդունեն յունական զօրքերի թիւում։

«Նեմի Նիւս» անգլիական լրագրին Աթէնքից գրում են հոկտեմբերի 8-ից։ Քաղաքը հեզհեզուկ պատերազմական պատկեր է ստանում։ Զօրքերը պատերազմական վարժութիւններ են անում և խոստանում են ապագայում լաւ ոյժ լինել Ամրոյզ Յունաստանը արթնացել է և պատրաստ է գործել, երբ հարկաւոր կը լինի։ Միայն Աթէնքի մէջ մօտ 10000 զինուորներ կան, իսկ ամբողջ Յունաստանի մէջ նրանց թիւը հասնում է 40000։ Նշանակը շատ գեղեցիկ է և ոգեւորված հասարակութիւնը ամենայն օր ներկայ է լինում գինուորական վարժութիւններին։ Մի քանի օրից յետոյ սպասում են յունական թագաւորի և թագուհու վերադարձը Թէսալիայից և Էպիրոսից եկած լուրերից երևում է, որ թիւրքերը ոգեորված են իրանց աջողութեամբ Թուղթիսիոի խնդրի մէջ և գիտաւորութիւն չունեն ցանկանալու որ և է զիջումն անելու։ Այդպիսի քաղաքականութիւնը անկասկած կը դառնայ պատերազմի պատճառ, որովհետև յոյները ոչինչով չեն հրաժարվի իրանց վիճակված նոր նահանգներից։

Աթէնքից «Հաւասի» ընկերութեանը հեռագրում են հոկտեմբերի 14-ից։ Յունական թագաւորին և թագուհուն սպասում է հոկտեմբերի 14-ին Պիրէյի մէջ մեծ պատրաստութիւններ են տեսնում նրանց հանդիպելու համար։ Ամբոխ ամենքը հմայված են, որ յունական թագաւորի այցելելը ևրօպական կառավարութիւններին մեծ օգուտ կը տայ Յունաստանին։ Ազգային ժողովի բացվելուն պէս ծառայութեան կը կանչվին 15,000 պահեստի զօրքեր։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դավրէժ, 30 սեպտեմբերի

«Մեղուի» 68 համարում կարդացի մի նամակ «Մի Դավրէժեցի ստորագրութեամբ, որի ամբողջ բովանդակութիւնը մի փնտանում ուզեցի արտայայտութիւն պէտք է համարել և ասելի ոչինչ։ Այդպիսի նամակագրին լուռ արհամարհանք էր լաւագոյն։ Բայց որովհետև նա այնպիսի գռեհկիներից է, որ պէտք է կարծէր, թէ իր վայ իմիրոյ գրուածքով յաղթանակը տարաւ, ուրեմն հարկ է պատասխանել։ Պարզենք հարցը։ Նախ պ. «Մի Դավրիժեցին», եթէ որ անձնական ատելութեամբ չէ գրել իր նամակը, ով կամ ուչն էր ստիպում նորան, որ ժամանակին մեր դպրոցների քննութեան վրա չը գրեց, չը գովեց և չը մեծարեցաւում էն, որ նա պատրաստում է մի արշաւանք էլ Որմի քաղաքի վրա անելու, բայց պարսից զօրքերը հեղհեղուկ ատեանում են և նորա առաջը կտրում։ Պարսկաստանի զօրքերից էլ մինչև 20 հազար հեծեալ և հետևակ, նոր զէնքերով զինուած, Կրմանշահից ուղիղ գնում են Նէչիթի վրա։ Այդ զօրքերի գլխաւորները, երբոպայի պաշտօնակատարներ են, որոց թիւում կայ և մի հուսա հրաշագիր։ Այդ բոլորին պարսից կառավարութիւնը բերել տուեց վերջին տարիներում Եւրոպայից, որ Պարսկաստանի զօրքերը կրթեն։ Նորանք տանում են իրանց հետ այն թնդանօթները, որոնք նոր նոր են ստացել Եւրոպայից։ Ասրպատականի զօրքը մի կողմից, Պարսկաստանցիք միւս կողմից, նշանակում է, որ Նէչիթը երկու կրակի մէջ պէտք է մնայ։

Վեհափառ Շահի հրամանաւ նախկին առաջին նախարարը Սիհշահարը նշանակվեցաւ Նորին Մեծութեան Թագաժառանգ իշխանին երկրորդական և Ասրպատականի ընդհանուր կառավարիչ։ Նա մի քանի օրից յետ Դավրէժում կը լինի։ Հարկաւ նորին վեհութիւնը մեծ ջանք գործ դնելով, շուտով Նէչիթին իր արժանի պատիժ կը հասուցանէ։

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՀՌՈՄ, 12 հոկտեմբերի։ Բիկաջոի վախճանվեցաւ ապօպլեկսիական հարուածից։

ՎԻԵՆՆԱ, 11 հոկտեմբերի։ «Ֆլրիս. Կորրեսպ.» լրագիրը լսել է. Թիւրքիան մտադիր է Անգլիայի և Ռուսաստանի վերաբերութեամբ յարձակողական դիրք բռնել։ Դրա համար նա մտադիր է մի մեծ համամասնական միութիւն կազմել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 հոկտեմբերի։ «Աբեն-Բիւս» հաւատացնում է, որ արևելեան հարցերը շուտով կը վճռվեն բաւականացուցիչ կերպով։ Յունական կառավարութեանը նա խորհուրդ է տալիս չափաւոր և համբերող լինել։

ՆԻՑԻՆ ՆՈՎԳՈՐՈԴ, 12 հոկտեմբերի։ Վոլգայի վրա սառուց է լողում։ Նաւերի համար այդ բանը յանկարծակի պատահեց։

ԿՐՈՆՇՏԱՏ, 12 հոկտեմբերի։ Այսօր ուղևորվեցաւ արտասահմանեան ջրերը ռուսական նաւերից մէկը։ Նաւահանգիստների մէջ սառուց է լողում։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մի անգամ է պատահել, այն էլ Հռոմում..... Նէրոն կարդից յետոյ, որ պակվել է մի տղայի հետ, մեր գրողի կարծիքով, երբէք ոչ մի երկրում և ոչ մի ժամանակ չէ պատահել որ մարդը, լինի նա իշխան, հասարակ մահկանացու, գրող, մանկավարժ կամ խմբագիր, պակվի մի տղայի հետ.....

Ինչ անենք, պէտք է հաւատանք յարգելի գրողին....

Բայց մի բանի մէջ թէ Աբար տեան երկրի և թէ Իրէյրիայի հայ մամուլը համաձայն է, այն է որ մարդու մտքերը, համոզմունքները, գաղափարները, հաւատը կարելի է փոխել մարդու գլխին գդակներով և մտքերով խնդալով, մարդուն ծեծելով, նրա գլխաթը ջարդելով, մրոտելով և այլն....

Երևում է որ այդ մտքեր յայտնողները իրանց գլխի վրա են փորձել այդ ճշմարտութիւնը, երեի փորձից գիտեն թէ ուրիշ երկիր չէ կարելի որ և է մտաւոր առաջադիմութիւն անել.... Ինձ մնում է միայն ցանկանալ որ Թիֆլիսում, Երևանում և Վաղարշապատում գտնվեն այնպիսի բարեբարներ, որոնք այդ գեղեցիկ փորձը փորձէին նրա հնարող գեղինակների վրա..... Բարեբարեր եմ ասում, որովհետև գոռանով կամ կը լաւանային մեր մի քանի պարբերական հրատարակութիւններ, կամ բոլորվին կանհետանային այն մեր մի քանի լրագիրները, որոնք իրանցից ազդի կոյտեր և անմաքրութեան խողովակներ են ներկայացնում։

Դորանով մինչ ամենամեծ բարեբարութիւն արած չէին լինի ազգին.... Իսկ բարկանալ բոլորվին տեղիք չէին ունենայ, որովհետև նրանց առաջարկած դեղը նրանց առողջութիւնը վերականգնելու համար գործ կը դրվէր։

* * *

Հայը միայն հայի հետ է մոլեռանդ, խաւարասէր, յետադէմ, իսկ եւրոպացու հետ նա ազատասիրա, առաջադէմ է ձևացնում իրան։ Մի հայ խաւարասէր խմբագիր, որ օրինակ քարոզում է թէ կրօնը փոխելով, մարդը իր արիւնն էլ փոխում է, ծանօթանալով մի անգլիացի միսիոնարի հետ, իրան ցոյց կը տայ ազատամիտ, համբերող, խղճի և կրօնի ազատութեան կուսակից և գուցէ կը խնդրի մինչև անգամ որ միսիոնարը Լօնդոն վերադառնալուց յետոյ բարեհաճի յօդուածներ գրել իր լրագրի համար և նա ուրախութեամբ կը տրպի այդ յօդուածները...

Ասում են որ հայասէր անգլիացի միստր Բրայս շուտով գալու է Կովկաս։ Ասում են որ հայոց մշտական թատրոնական խմբի ժամանակաւոր կոմիտէտը գիտաւորութիւն ունի Բրայսին պատուելու համար ներկայացնել հայոց լեզուով Շեկսպիրի «Համլէտ»։

Ասուած կը սիրէք, իշխան Ամատունի, այդ բանը մի անէք, եթէ ոչ երբ որ միստր Բրայս կը տեսնի թէ որքան անողորմ կերպով հայերը ազատագրում են անգլիական ազգային հանճարի հրաշալի ստեղծագործութիւն, նա շատ ախուր գաղափար կը ստանայ, առհասարակ, հայերի վրա, կը յուսաչատվի մեր մասին, և ինքն իրան կասի. «Եթէ հայերը քաղաքակիրթ Եւրոպայի մտաւոր կեանքի ամեն արգասաբերները այդ ատոհման են ազատագրում,—այդ ազգից ոչինչ չէ կարելի սպասել ապագայում։»

* * *

Մինչև որ Թիֆլիսի վրաց մշտական թատրոնական խումբը տալիս է կենդանի, ինքնուրոյն, տեղական կեանքից վերցրած պիէսներ, կամ օտար գրականութիւնից փոխադրված և մեր կեանքին յարմարեցրած թեմեն և կենդանի գրվածները, հայոց մշտական թատրոնական խումբը շարունակում է կիսակարել հասարակութիւնը հին, փտած պիէսներից բաղկացած մակերես օտարաթարգմանութիւններով, ինչպէս, օրինակ «Լիւսի Դիդիէ», «Գորդոն կամ Լօնդոնի աշտարակը», և այլն....

Իմ բարեկամ պ. Կը.ռ.ո գրել է հետևեալ բէցկնիկա հայոց թատրոնական վերջին ներկայացումների մասին, որ ես գեռեղում եմ, բառ առ բառ իմ Գելիեռնոնիս մէջ։

«Հայկական թատրոնի պիէսաներուն գրեթէ մեծագոյն մասին բովանդակութիւնը հրաշագործութիւն է։ Սեթ «Ճարպանքը» յօրինող լուսանոզի Ներսէս Կայսերին կենդանի լինէր և մեր թատրոնը յանձնէր, անտարակոյս մի քանի շաբաթան ալ մեր հրաշագործ թատրոնի համար կը գրէր։ Ես կոմիտէին տեղը լինէի, սա կերպով մի ոգի կը հրատարակէի։ «Որով կուգաց այք բացան, խուլք և համրք արձակեցան» հրաշագործութիւն երեք գործողութեամբ, սովորական գեղեցիկ յօդուածներ և այլ հիւանդանոցների և խենթանոցների։

«Ժամանակաւոր Պրոպատիկէ աւազան կար, որտեղ կաղաց, կուրաց և գոսացելոց բժշկութիւն կը տար էր, այժմ կարգը մեր բեմին է հրաշագործութիւններ ընելու։ Ի ծէզ անդամալոյծն անգամ մեր բեմին վրայ ներկայանայ, իսկոյն կարող է բժշկիլ և քալել։ Ինչ աչ անելի բան.... Եթէ ամեն տեղ լալի այս գրաքը, մեր թատրոնը ուխտատեղի կը դառնայ. այն ատեն ոչքան համր, խուլ, կոյր, կաղ, անդամալոյծ, գոսացեալ, լուսնոտ, բորոտ, գիւհաշտ և այլոց կան, ամենն ալ թատրոն պիտի թափին բժշկուելու համար և ուշ այն ատեն թատրոնին բիւրաւոր ուրիշ կեղտարանք կառնու, որովհետև մեր բեմը կարդին աչքը իսկոյն կը բանայ, խուլին ականջը, անդամալոյծը կը քալեցնէ, պակասած մարդուն և համրին լեզուն կը տայ (ախտոս որ խեղճ Զաքարիան մեր թատրոնին չը հասաւ), շղթայակապ խենթին կը բժշկէ, վերջապէս մեր բեմը ամեն տեսակ ախտեր արմատից կարող է բուժել, ի բաց առեալ այն անբուժելի հիւանդութիւնը, որ է հայերէն չը գիտենալը։ Այժմ հիւանդասիրաբար անհամարելի կը սպասվ այնպիսի մի պիէսագրի, որուն մէջ մեռեալ մը Զաղարոսի նման յարութիւն առնէ։»

* * *

Իսկ ես նմանվելով իմ բարեկամ Կը.ռ.ի լեզուին կաւելացնեմ.

Կը վախնամ թէ մեր թատրոնին կոմիտէն իր լուսաւորեալ ջանքերովը նոյն իսկ հայոց թատրոնը կատարելապէս չը մեռցուցէ, և մեր հասարակութիւնը կոմիտէին քաջագործութիւններէ վերջը սոսկալի չըլլայ երկար տեսնե անհամբեր սպասել որ ինքն հայոց թատրոնը և թատրոնական գաղափարը մեռեալ Զաղարոսի մը նման յարութիւն առնէ։

* * *

Ցեղիեռնոնս վերջացնելով չեմ կարող չը լիշել որ նորերումս յայտնվեցան մեր հայոց ազգի մէջ երկու երեւելի անձնաւորութիւններ։ Մենք ունէինք Զարդան Մամիկոնեան, որ արիւն թափեց կրօնի և ազգի համար, մենք ունէինք Մովսէս Խորենացի, որ տեղնակեց մի հրաշալի հայոց պատմութիւն, և իր մտքերի համար հաւանվեց մեր հոգևորականութենից, մենք ունէինք Նէնիկի պէս մի փիլիսոփայ, մենք ունենք Ագիշանի պէս մի ազգային բանաստեղծ, մենք ունենք Այտընեանի պէս մի գիտնական լեզուագէտ և այլն և այլն....

Բայց այդ բոլոր անձինք ոչինչ չեն, համեմատելով երկու երեւելի անձնաւորութիւնների հետ, որոնք նորերումս յայտնվեցան մեր հայոց ազգի մէջ... Սրանք են՝ վաղարշապատցի Ղազար Տէր-Ղազարեանց և Թիֆլիսեցի Սարգիս Ղազարեան Նազարեանց։

Նրանք միակ էին, որոնք տեսնելով որ «Մշակը» քարոզում է սէր, հաւասարութիւն և միութիւն լուսաւորչականների, բողոքականների և կաթոլիկների մէջ, տեսնելով որ «Մշակը» ասում է թէ լեզուն է ազգութիւն պահպանողը և ոչ թէ կրօնը, որ հայերէն չխմացող հայը հայ չէ, նրանք միակ էին, որ հասկացան թէ «Մշակը» դէպի ա՛ն դ ունդ ն է գ լ ա ր ո ւ մ ազգութիւնը,—և յետ պահանջեցին հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մշակի» բաժանորդութեան վճարը երեք ռուբլ, յայտնելով որ այլ ևս չեն կամենում ընդունել «Մշակի» պէս վնասակար լրագրի համարները, որ նրանց համար անպէտք են։

Հին յունական պատմութեան մէջ կար մի մարդ, որ շատ փառասէր էր, բայց չը գիտէր ինչպէս յայտնվի, ինչպէս անի որ իր անունը անմահացնի։ Մի լաւ բան նա անկարող էր անել,—և ահա նա մտածեց հետևեալը և իրագործեց էլ. նա կրակ տուեց մի յունական տաճարին և մի գաւառատ ազգային գրագարանին։ Եւ ճշմարիտ նրա անունը մինչև այժմ մնաց պատմութիւն մէջ և կը մնայ միշտ.....

Հաւատացած եղէք և դուք՝ Ղազար Տէր-Ղազարեանց վաղարշապատեցի և Սարգիս Ղազարեան Նազարեանց Թիֆլիսեցի, որ ձեր անունն էլ միշտ կը լիշվի հայոց պատմութեան մէջ։ Նրբ որ մեռնելու կը լինէք, Ղազար Տէր-Ղազարեանց և Սարգիս Ղազարեան Նազարեանց, կարող էք հանգիստ մեռնել,—ապագայ սերունդը ձեզ երբէք չի մոռանայ և ձեր անունները, Ղազար Տէր-Ղազարեանց և Սարգիս Ղազարեան Նազարեանց, կը գրշվին ոսկեայ տառերով հայոց պատմութեան էջերի վրա՝ Ղազար Տէր-Ղազարեանց վաղարշապատեցի և Սարգիս Ղազարեան Նազարեանց Թիֆլիսեցի։

Ասիացի